

1286

ԿՍՐԼ ԿՍՈՒՑԿԻ

Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ն Ե Ր Ը

Ե Ի

Ս.ՓՈՒՈՒԹԻԻՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Հրատարակութիւն «Կայծ»-ի

(17/47) 1905  
2-37

ТИФЛИСЬ.

Олектронпечатня „Гутенберг“, Двори. л. Груз. Дворянства.

1906

17.1903  
4-37

48

Բանւորական գրադարան Ձ 5

ՈՂ ԿԱՌԻՑԿԻ

ԿԻՒՂԱՑԻՆԵՐԸ

ԵՒ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ

ՅԵՂ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԱՅՏԻՂԱՍԵ Է  
1906

Թարգմ. Ս. Բանուրեան



Հրատարակութիւն «Կայծ»-ի  
1906

2004

# ԳԻՒՂԱՅԻՆԵՐԸ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

## ՌՈՒՍԱՏԱՆՈՒՄ

«Vorwärts»-ի\*) փետրւար 10 համարում գետեզած է «Խուս կառավարութեան քաղաքականութեան մասին» յօդւածը, որ սկսւում է հետևեալ խօսքերով. —

«Մայլ յօդւածում, որ ըստ երևոյթին սալիս է ուս սպառամիտների տրամադրութիւնը, «Vossische Zeitung»-ը Մոսկւայի իր աշխատակցի բերանով բացատրում է քաղաքական դրութիւնը: Աշխատակիցը հաւատացնում է, որ իշխանութեան գլուխ կանգնած կառավարչական խմբակը (КРИКА) պարբերաբար ջանք է գործ դնում, որպէսզի «ամբոխի» — այսինքն՝ գիւղացիների — «տգիտութիւնը գրգռի» յեղափոխական ինտելիգենցիայի դէմ: Անվիճելի է, որ շատ վաղուց է միապետութիւնը հետևում այս քաղաքականութեան, և զեռ ևս ոչ այնքան վաղ նա գործադրեց այդ բանը գործարանական բանւորների վերաբերութեամբ, որոնք, ի հարկէ, բաւական գիտակից են՝ զո՞ն չը գնալու համար այդ խաբերայութեանը»:

«Vossische Zeitung»-ի, յօդւածից «Vorwärts» առաջ է բերում հետևեալ կտորը. —

«Ամենից աւելի պարզ կերպով արտայայտում է Պրէզիդենտի, գլխիով գիւ-

\*) «Vorwärts» — «Յառաջ», Գերմանիայի սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան կենդրոնական օրգան:

ТИФЛИСЬ

Электрон. „Гуттенберг“ Двор. ул., д. гр. лв.

1906



85257-42

435-90

դացիներին մի շրջաբերականով, որով նա յորդորում է նրանց պաշտպանել ցարին և հնազանդել նրա իշխանութեանը: Ո՞ւմ դէմ պէտք է ցարին պաշտպանել: Ի հարկէ ներքին թշնամու դէմ, լիբերալների և բուրոր ոչ-ճշմարիտ-ուուս մարդկանց, ինտելիգենտների դէմ, որոնց արդէն ձանձրացրել է իրանց սեփական և ժողովրդական կեանքի հիւթը ծծելու դէմ համբերելը: Չարագործ խմբակը ներկայումս ժողովրդին նախապատրաստում է մի աշխատանքի համար՝ բէակցիայի օգտին: Իր բնակութեան շրջանում այս բանը պէտք է հասկանայ հրէան, իսկ կենդրոնական Ռուսաստանում—ազատամիտ զէմէյը: Պետերբուրգի զէպեքերից յետոյ ես պետական այդ խմբակին ամեն բանի ընդունակ եմ համարում, և ոչ մի կրթւած ոուս մարդ ժխտել չի կարող, որ ժողովրդականութիւնը—այս խօսքի բառացի մտքով—կը մնայ իշխանութեան կողմը...

«Ես չեմ կարծում, որ գիւղացիական շարժումները Ռուսաստանում միաժամանակ կսկսեն բոլոր նահանգներում. սրա համար իշխանութեան գլուխ կանգնած խմբակը չափազանց շատ հակառակորդներ ունի նահանգապետների մէջ. նոյնպէս էլ քիչ կարող եմ հաւատալ այն բանին, որ այսպիսի ապստամբութիւն: Կսկսի հէնց այժմ: Գործադուլներին մասնակցած բանւորական ամբոխը աքսորուում է իր ծննդավայրը: Հարց է, թէ ինչ՞նչ գիւղ են աքսորուում իսկապէս հէնց անհանգիստ տարրերը, և ոչ թէ հազարաւոր չբաւորները: Սրա համար այլ բացատրութիւն գոյութիւն չունի, բացի իշխանութիւն ունեցողների ցանկութիւնը գիւղերում ժողովուրդին գրգռել ինտելիգենցիայի դէմ:

Չը նայելով սրան, չի կարելի աշունից առաջ գիւղացիների ապստամբութիւն սպասել ինտելիգենցիայի դէմ: Բայց այն ժամանակ հրապարակ կը գան տնտեսական ֆակտորները, որոնք, ինձ թւում է, գոնէ մի քանի նահանգներում անխուսափելի կը դարձնեն ապստամբութիւնը: Այսպիսի ֆակտորներից մէկն ամենից առաջ յայտնուում է հացահատիկի պակասութիւնը սերմանելու համար և փողի պակասութիւնը՝ դրան գնելու համար իսկ յետոյ բանւոր ձեռքերի գոհացուցիչ քանակութեան բացակայութիւնը: Սերմանելու շրջանը Ռուսաստանում չափազանց կարճ է, քան թէ Գերմանիայում, իսկ վարելահողերը, կտրուած զանազան տեղերում, յաճախ միմեանցից 2 3 մղոն հեռուոր տարածութեան վրայ են ընկած: Մի քանի զինւորական շրջանների պէտք եղաւ, բացի դրանից, 7 կամ 8 անգամ զինւորակոչ անել, այսինքն՝ մօբիլիզացիա: Շատ վիճակների կամ նահանգների գիւղացիներ հնարաւորութիւնից զրկւած կը լինեն հացահատիկ ցանել, և դրա հետ միասին, քիչ յետոյ էլ նրանք զրկւած կը լինեն նաև բերքից: Պետութիւնն անկարող կը լինի իր ժամանակին հաց հայթայթել, եթէ մինչև անգամ նա իր Ֆինանսական դրութեամբ կարող լինի այդ քայլն անել: Եւ այսպէս, թնչ է մնում ուրեմն գիւղացիներին, բացի կողոպուտից ու թալանից: Չէ՞ որ ոչ ոք չի մտածում, թէ գիւղացին արդէն այնքան է ուժասպառ եղել, քամւել, որ պատրաստ է պառկել և մեռնել:

«Եթէ ինքնակալ կառավարութիւնը չի գիշի և իսկոյն չի գոհացնի չափաւոր-լիբերալ կուսակցութեան դրած գլխաւոր պահանջները, այն է՝ մամուլի ազատութեան

և գեմսիկի գործիքներից պարլամենտ հրաւիրելու պահանջը, այն ժամանակ Ռուսաստանը կը դառնայ ժողովրդական ապստամբութեան բեմ, որը իր սարսափներով յետ չի մնայ Գերմանիայի երեսունամեայ պատերազմից: Այս ապստամբութիւնը, կարող է պատահել, որ ոչ միայն կը սրբէ ու կալէ Ռուսաստանի այժմեան կառավարութիւնը, այլ և կ'ոչնչացնէ կուլտուրան ու կը կործանէ ռուսական պետութիւնը»:

Որպէս վերջաբանութիւն, «Vorwärts» հետեւեալ նկատողութիւնն է անում այս եզրափակումների առիթով:—

«Այս պատկերում, ինչպէս տեսնում է, լիբերալների տրամադրութիւնը և բուրժուազիայի վախն է արտայայտում խաւար ամբոխի ապստամբութեան առաջ: Որքան այս վերաբերում է գիւղացիներին, որոնք յիշաւի մինչև անգամ եպիսկոպոսական պատերազմը գնացին, զէպի ինքնակալութիւնն ունեցած կոյր հաւատքից ոգևորած,— կարելի է, որ այս երկիւղը հիմունքից զուրկ չէ: Ընդհակառակը, փրկութեան ամբողջ հնարաւորութիւնն այժմ գործարանական պրօլետարիատի մէջ է գտնւում. բայց կառավարութիւնն էլ ջանք գործ կը դնէ նրան խարդախ ու խորամանկ խոստումներով իր կողմը գրաւելու՝ ինտելիգենցիայի դէմ կուելու համար: Սակայն «չափաւոր լիբերալները» վախենում են իրանց դասակարգային հակառակորդից—պրօլետարիատից, և այստեղից է առաջանում նրանց անն ու սարսափը, որ գնորքներ է ստեղծում: «Չափաւոր» լիբերալիզմն է հէնց այն վտանգը, որին յաղթահարել կարող է միայն վճռական զէմօկրատիան»:

Երբ մեր կենդրոնական օրգանը ենթադրում է, որ «Vossische Zeitung»-ի երկիւղը, որքան սա վերաբերում է գիւղացիներին, «հիմունքից զուրկ չէ», և որ «ամբողջ փրկութիւնը գործարանական պրօլետարիատի մէջ է», այն ժամանակ այս բանը կարող է շատ սխալ ենթադրութիւններէ հասցնել, մանաւանդ, եթէ այս ասած խօսքերի հետ համեմատութեան դնենք, բաղդատենք «Vorwärts»-ի առաջաբանը, ուր ասում է, որ «տիրապետող խմբակը աշխատում է պարբերաբար գիւղացիներին գրգռել յեղափոխական ինտելիգենցիայի դէմ»: Կարելի է մտածել, որ մեր լրագիրը գիւղացիների ապստամբութիւնից ամենավատ բանն է սպասում «յեղափոխական ինտելիգենցիայի» և յեղափոխութեան համար, եթէ ասում է, որ իրերի ներկայ դրութեան միջոցում միակ փրկիչը գործարանական պրօլետարիան է հանդիսանում:

Ես չը գիտեմ, արդեօք իսկապէս այս բանն է կամեցել «Vorwärts»-ն ասել: Յամենայն դէպս, սա երկրորդական խնդիր է: Կարևոր է այն, որ այսպիսի երկիւղները, եթէ իսկապէս նրանք ծագում, առաջ են դալիս,—կատարելապէս անհիմն են: Յեղափոխութիւնը Ռուսաստանում երբէք չպէտք է վախենայ գիւղացիների ապստամբութիւնից, այլ ընդհակառակը, նա պէտք է նրանից սպասի ամենալաւ հետեւանքներ: «Vossische Zeitung»-ը միանգամայն իրաւացի է, երբ ասում է, որ գիւղացիների ապստամբութիւնը կարող է չափազանց անախորժ լինել «ազատամիտ զէմէցի», համար, բայց չի կարելի սակայն զէմէցին շփոթել «յեղափոխական ինտելիգենցիայի» հետ:

Յեղափոխական ինտելիգենցիան գլխաւորապէս կազմուած է այն ուսանողներէր, որոնք Ռուսաստանում ոչ մի ընդհանուր բան չունեն Գերմանիայի ուսանողներին հետ: Եթէ մեզանում հետզհետէ բարձրագոյն կրթութիւնը դառնում է աւելի ու աւելի մենաշնորհ ունեւոր դասակարգերի համար, եթէ ժամանակակից գերմանական ուսանողի իղէջան է հանդիսանում պահեստի լէյտենանտը, եթէ գերմանական ուսանողը գլխաւորապէս նրա համար է պարագում, որ իր տւետնական կրճքի մէջ զարգացնի այն «սառած մեծամտութիւնը», որն արդէն նշաւակել, ծաղրել է Հէյնէն, — ուսու ուսանողները դեռ ևս այնպիսի աղքատ ծնողների զաւակներ են, որոնք մեծամեծ զրկանքներ են կրել: Սրա հետ միասին ուսու ուսանողները մշտապէս գտնուում են նաև ոստիկանութեան հսկողութեան տակ և հալածուում սրա կողմից: Նրանց մի մասը իսկական պրօլետարներ են. միւսները, որոնք աւելի լաւ պայմանների մէջ են գըրընուում, պատկանում են, գոնէ, ընդդիմադիրներին, և, իրանց ընկերների շնորհով, դիւրութեամբ են իւրացնում պրօլետարիատի գաղափարները: Ահա տարրեր, որոնցից կազմուում է սօցիալիստական յեղափոխական ինտելիգենցիան: Ի հարկէ բոլոր ուսանողները չեն պատկանում սրան: Կարիէրիստներ և ֆրանտներ պատահում են նաև ուսական համալսարաններում: Բայց սրանք սակաւթիւ են, և սրանց աւելի շատ են անարգում այնտեղ, քան թէ «մրտածողների և բանաստեղծների ժողովրդի» բարձր ուսումնարանական հաստատութիւնների մէջ:

«Ազատամիտ գէմէյը» ոչինչ ընդհանուր

բան չունի յեղափոխական ինտելիգենցիայի հետ: Ազատամիտ գէմէյը, որի մասին է այստեղ խօսքը, — այդ ազնական-կալածատէրն է, որի համար գաղափարական աշխատանքը, ամենալաւ դէպքում, մի կողմնակի, երկրորդական զբաղմունք է: Նա ինքն ընդդիմադիր է, աւաջին, նրա համար, որ նրա անտեսութիւնը հետզհետէ աւելի և աւելի վատ է ստաջ գնում, իսկ կառավարութիւնը, չնայած նրա արած բոլոր առատածեան «սիրոյ շնորհներին» պարտքերի տակ ճնշած հողատիրութեանը, քայքայում է գիւղական անտեսութիւնը՝ իր հարկային և մաքսային քաղաքականութեամբ, երկրորդ՝ նրա համար, որ գիւղացիների ապստամբութեան միջոցում նա, կալածատէրը, ամենից շատ կորուստ կուսնենայ: Ահա թէ ինչու նա է ձգտում ազատամիտ րէժիմի, որը, ինչպէս նա է յոյս տածում, կարող է գիւղացուն գոհացումն տալ՝ առանց դիպչելու նրա անձնական շահերին, ինտերէսներին: Հէյնց սրա համար էլ նրան ծայրայեղ կերպով ճնշում է այն չնչին դերը պետութեան մէջ, որին նա դատապարտւած է ամենակարող բիւրօկրատիայի կողմից:

Ահա հէյնց այս լիբերալները պէտք է վախենան գիւղացիութեան խռովութիւններից, իսկ ամենևին ոչ — «յեղափոխական ինտելիգենցիան»: Չէ որ չի կարելի ենթադրել իսկ, թէ յուզած ու զրգուած գիւղացիները կը գիմեն քաղաքները և կըսկըսեն յարձակել համալսարանների վրայ:

Այն երկիւղը, թէ գիւղացիներին կարելի է հաւաքել ու դուրս բերել յեղափոխական ինտելիգենցիայի դէմ, սա միայն մի յիշողութիւն է, որ շատ վաղ ժամանակներէր

մնում է նկարագրւած Տուրգենևի կողմից «Нобб» վէպում: Այս վէպը երկար ժամանակ եղաւ այն գլխաւոր աղբիւրը, որից քաղեցին «կրթւած» արևմտեան եւրոպացիները իրանց տեղեկութիւնները «նիհիլիզմի» մասին:

Այն ժամանակ, երբ ուսանող երիտասարդութիւնը գնաց «ժողովրդի մէջ», որպէսզի գիւղացիների շրջանում պրօպագանդա անի սօցիալիզմը, յիբաւի պատահեց, որ գիւղացիները վատ ընդունելութիւն ցոյց տւին քաղաքացի ագիտաօրներին, ծեծեցին և քշեցին նրանց կամ մինչև անգամ իշխանութեան ձեռքը յանձնեցին: Սակայն այդ ժամանակները վաղուց արդէն անց են կացել: Գիւղացիների մէջ ագիտացիա անող ուսանողներն այժմ շատ քիչ են, նոյն իսկ նրանց ագիտացիան այլ ևս պէտք էլ չի նրանց, քանի որ վերջին ժամանակներում կազմեցաւ մի նոր ժողովրդական խաւ, որը չափազանց ակտիւ մօտ է կանգնած գիւղացիութեան, քան ուսանողները: Նոր խաւի ներկայացուցիչներին գիւղացին աւելի լաւ է հասկանում, նրա հետ նա կապւած է բաղմամբիւ սօցիալական յարաբերութիւններով, որովհետև նրանք այնքան վաղ չի, որ դուրս եկան գիւղացիական շրջանից: Այդ նոր խաւը—գործարանական պրօլետարիատն է:

Վարձու բանւորը հայրենիք վերադարձնալով գնում է իր տուն, այն գիւղը, ուր նա ծնւել է, ուր առւմպը են նրա ծնողները, եղբայրները և քոյրերը, նրա ազգաձկանները և ընկերները: Այսպիսի մարդուն բոլորովին այլ կերպ են ընդունում, այլ կերպ լսում, քան թէ այն ուսանողին, որի առը հագիւ էր հասկանալի դասնում գիւ-

ղացու համար, և որը, ըստ իր արտաքինի և սովորութիւնների, պատկանում է գիւղացու համար ատելի պաշտօնեաների և շահագործողների դասակարգերին:

Այժմ ոչ մի բան չի մղում դէպի գիւղ «յիզափոխական ինտելիգենցիային»: Ինչո՞ւ համար ուրեմն կարող է այսպիսի դէպքում պայթել նրա—ինտելիգենցիայի—գլխին գիւղացիների կատաղութիւնը: Այլ կերպ է, ի հարկէ, գործը «լիբերալ զէմէցների», նրանց ազարակների, լիամբարների և լաւ պարտացրած անասունների վերաբերութեամբ, այնպիսի առարկաների, որոնք գտնւում են անօթի գիւղացու քթի տակ և չափազանց զիւրին կերպով գրգռում նրա քաղցն ու ագահութիւնը: Սակայն այս վտանգաւոր դրութիւնը «լիբերալ զէմէցները» բաժանում են բոլոր խոշոր կալւածատէրերի, մինչև իսկ ամենապահպանողականների և ժամանակակից կազմի ջերմ երկրպագուների հետ: Այս վերջինները պէտք է կատարեալ կոյր լինեն, նրանք պէտք է վերջնականապէս կորցնեն իրանց գլուխները, որպէս զի մուժիկներին ազատամիտ կալւածատէրերի զէմ գրգռես: Գիւղացիները ժամանակ չեն կորցնի որոշելու համար քաղաքական նուրբ տարբերութիւնները, այլ կը յարձակեն բոլոր խոշոր կալւածատէրերի վրայ:

«Vorwärts» մատնացոյց անելով «Vossische Zeitung»-ի հաղորդածի վրայ այն մասին, թէ տիրապետող խմբակը պարբերաբար աշխատում է զրգոել գիւղացիներին ազատամիտների և ինտելիգենտների զէմ, նկատում է.—«Կատարելապէս ճշմարիտ է, վժ որւրօկրատիան արդէն վաղուց հետևում է այս քաղաքականութեան»: Աւելի ճշմար-

բիտ կը լինէր այն նկատողութիւնը, թէ բիւ-  
րօկրատիան վաղուց զգուշանում է հետեւել  
այս քաղաքականութեան, եթէ «լիբերալներ»  
և «խնտելիզեանտներ» անունի տակ հասկա-  
նանք այն դասակարգերը, որոնց ներկայ  
դէպքում միայն կարելի է հասկանալ, այ-  
սինքն՝ ազատամիր կալածատէրերին, և ոչ  
թէ յեղափոխականօրէն տրամադրուած ու-  
սանողներին: Նրա համար, որպէսզի ասել,  
իբր «տիրապետող խմբակը» պարբերաբար  
հետևում է, մինչև իսկ այժմ, այսպիսի  
ինքնասպան քաղաքականութեան, պէտք է  
գոյութիւն ունենան աւելի ծանրակշիւ  
ապացոյցներ, քան թէ մի որևէ Մօսկուայի  
ազատամիրտի երևակայական երկիրը:

Բայց սրանով դեռ ևս ասուած չէ, թէ  
աշունը չի բերի մեզ գիւղացիներին խոռ-  
վութիւն Ռուսաստանում: Գիւղացիական  
ապստամբութիւնները մի անսովոր բան չեն  
ներկայացնում այնտեղ: Գրեթէ իւրաքան-  
չիւր տարի տեղի են ունենում մի քանի  
գիւղացիական բուռտեր, որոնք նոյնպիսի  
կանոնաւորութեամբ են կրկնուում, ինչպէս  
փոթորիկը ամառ ժամա ակ, սակայն նոր-  
մալ, կանոնաւոր պայմաններում այս բուռ-  
տերը աւելի փաստ չեն պատճառում, քան  
թէ այս վերջինը, և դիւրութեամբ ճնշուում  
են:

Ռուս գիւղացին դեռ ևս աւելի շատ հե-  
ռու է քաղաքական և կուլտուրական կեանքի  
կենդրօնից, քան թէ արևմտեան-եւրոպական  
գիւղացին, տեղական կարիքներն ստիպում  
են նրան յանկարծակի ընդհարել իշխա-  
նութեան հետ առանց պլանի, առանց  
ընթացաբար բնակիչներին համաձայնութեան,  
առանց ուշադրութիւն դարձնելու երկրի  
ընդհանուր-տնտեսական և քաղաքական

գրութեան վրայ, առանց ընդդիմադրութեան  
և ընդհարման միջոցներին: Սովորաբար բա-  
ւական են մի քանի կողակներ, որպէսզի  
բուռտ անող գիւղը «խաղաղացնեն» և հան-  
դիսաւոր ծեծը, քոտկելը, որին ենթարկում  
են գիւղի աւելի համարձակ և աչքի  
ընկնող ներկայացուցիչները, իւրաքանչիւր  
բուռտի սովորական վերջաւորութիւնն է  
կազմում:

Բայց այս անգամ պէտք է այլ բան  
սպասել: Տեղեկութիւնները դժբաղդ պա-  
տերազմի և քաղաքներում պատահող ան-  
կարգութիւնների մասին թէև դանդաղ,  
բայց անզգալի կերպով թափանցում են  
ամենահեռաւոր գիւղերը, տարածելով նը-  
րանց մէջ ընդհանուր ալեկոծութիւն, յու-  
զում: Պատերազմը Սապօնիայի հետ, որպէս  
հակադրութիւն վերջին ուս-թուրքական  
պատերազմի, հէնց իր ամենաառաջին մօ-  
մենտից ընդհանուր դժգոհութիւն առաջաց-  
րեց. կատաղութիւնն աճեց իւրաքանչիւր  
մօրթիլիցացիայի միջոցում: Ասենք, «Vor-  
wæts»-ն ասում է, որ գիւղացիները մա-  
սամբ պատերազմ գնացին «կոյր ոգևորու-  
թեան մէջ», սակայն այս կոյր ոգևորու-  
թիւնը գոյութիւն ունեցաւ միայն ուս  
ստոր ու քծնող մամուլի սուտ տեղեկու-  
թիւններում: Իրականութեան մէջ ոչ մի  
այդպիսի բան չկար:

Պատերազմի հետևանքն այժմ նպաստում  
է այն բանին, որ գիւղում հետզհետէ աւե-  
լի և աւելի է աճում «կոյր ոգևորութեան»  
կատարեալ հակառակ տրամադրութիւնը:  
Սրան նպաստում են պարտութեան լուրե-  
րը, որոնք վերջի վերջոյ մտնում են նաև  
գիւղական խրճիթները, և գլխաւորապէս  
այն խեղանդամներն ու հիւանդներն, որոնք



վերադառնում են պատերազմից, և որոնց ծննդավայր են ուղարկում, որպէսզի նրանք քաղաքներում աչքի չընկնեն: Այս խեղանդամ, այլանդակաձմ մարդկանցից իւրաքանչիւրի դժբաղդութիւնն ու դառնութիւնը պէտք է թմբութիւնից արթնացնէ մինչև իսկ ամենարթամիտ անտարբեր գիւղացուն: Կառավարութեան դէմ եղած այս ագիտատորներին միանում են այժմ նաև այն բանւորները, որոնք խմբերով աքսոր են ուղարկւած անկարգութիւններով պատած քաղաքներից. չի կարելի ի հարկէ բոլորին էլ գնդակահարել կամ բանտ նստացնել: Սրանք գիւղերում խլրտուսների համբաւբերներ են հանդիսանում և բորբոքում ու առաջացնում նոր խռովութիւններ: Ինչպէս իր ժամանակում, Գերմանիայի սօցիալիստների դէմ եղած օրէնքի գործադրութեան միջոցում և ուժեղացրած պահպանութեան միջոցում Աւստրիայում, բազմաթիւ ընկերների աքսորումը մեծ քաղաքներից մի ուժեղ, հզօր դրդիչ եղաւ սօցիալիստական պրօպագանդայի զարգացման համար աքսորւած տեղերում, — նոյնպէս էլ միևնոյնը այժմ մենք տեսնում ենք նաև ուսական ընկերայի գործունէութեան միջոցում: Բայց ոչ ոք չի կամենայ պնդել, հաւատացնել, թէ Բիսմարկը և Տասֆը «պարբերական կերպով» ձգտում էին փոքր քաղաքների պրօլետարիատին զրգուել կապիտալիստների դէմ: Եւ սօցիալիզմի թշնամիներից իւրաքանչիւրին պէտք էր երկուսից մէկն ընտրել. — կամ իրանց ներկայութեանը տանել խռովարարների անկարգութիւնները, ուր նրանք ուղղակի վտանգաւոր են, կամ թէ քշել նրանց որքան կարելի է աւելի հեռու, որպէսզի մի առժամանակ

աւելի հանգիստ շունչ քաշեն, իսկ յետոյ էլ — ենթարկել նրանց կրկնապատկւած ուժեղ յարձակմանը:

Այս միևնոյնը պէտք է պատահէր և Ռուսաստանում, և այն էլ չափազանց արագ և եռանդագին կերպով, քան թէ Գերմանիայում և Աւստրիայում, որովհետև եթէ պատերազմի իւրաքանչիւր մէկ տարին երկու տարի է հաշւում, ուստի յեղափոխական ժամանակ մէկ տարին պէտք է համարւի 10 — 20 տարիներ:

Պատերազմը և քաղաքային անկարգութիւնները ոչ միայն տարիից տարի տիրաբար դրդում են դէպի գիւղացիական ապստամբութիւնները, նրանք նոյնպէս և պետական իշխանութեանը հնարաւորութիւնից զրկում են ճնշելու այս բռնտերը: Զօրքերը և ոստիկանութիւնն այժմ ծանրաբեռնւած են անտանելի աշխատանքով, թէև, համեմատաբար, քաղաքային ազգաբնակչութիւնը քիչ է. Ռուսաստանի ամբողջ 130 միլիոն ազգաբնակչութիւնից 14 սոկոսն է միայն քաղաքներում ապրում: Դիւղական ազգաբնակչութիւնը դեռ ևս բաւական զօրք է մէջտեղ դնում նրա համար, որպէսզի, գոնէ, խանդարել քաղաքներում ապստամբութեան յաղթանակը, եթէ ոչ ամբողջովին ոչնչացնել, ջնջել նրան: Իսկ սրտեղից զինւորներ առնել՝ զսպելու համար գիւղացիների ահագին քանակութիւնը: Եւ հէնց որ մի անգամ միայն գիւղացիները կը տեսնեն, թէ իրանք կարող են ապստամբել անպատիժ կերպով, այն ժամանակ ապստամբութիւնն աւելի գիւրդին կերպով կը բորբոքւի սաստիկ բոցերով: Այլուոյ նիւթի մէջ պակասութիւն չկայ:

Եւ այսպէս, մենք կարող ենք սպասել, որ

մի քանի շաբաթներից կամ ամիսներից յետոյ քաղաքների մշտական ալեկոծութիւններին կը միանան և ընդարձակ կերպով կը տարածւեն խռովութիւնները նաև գիւղերում, եթէ իր ժամանակին պարլամենտական սահմանադրութիւնը չի հասնի և ժողովը չի տանջող դասակարգերին մի անգամից հնարաւորութիւն չի տայ հասնելու իրանց ձգտումների իրականացմանը, օգտւելով նոր ձեերից: Զէմէցը շատ գեղեցիկ կերպով գրատէ, թէ ինչո՞ւ ինքը հէնց այժմ այդքան թափով գիմեց դէպի լիբերալիզմը: Երբ որ գեղացիները կապը տամբեն, այն ժամանակ նրա պարլամենտական սահմանադրութեան բոլոր պահանջները արդէն ոչ մի արդիւնքի չեն հասցնի:

Գիւղացիների խռովութիւնը չի կարող վտանգ սպառնալ յեղափոխական գործին, նա կարող է նրա զարգացմանը միայն նըպաստել:

Հէնց սկզբից չէր կարելի սպասել, որ քաղաքի բանւորների մէջ եղած այեկոծումները կտանէին դէպի ժամանակակից բէժիմի անմիջական անկումը:

Վերջինի տրամադրութեան տակ են գտնուում ժամանակակից գինւորական տեխնիկայի բոլոր միջոցները, որոնց դէմ չի կարելի ատրճանակներով և ձեռքի բռնակներով կուել: Բաստիլի շտուրմը, 1848 թւի փետրւարի և մարտի օրերը, այլևս կրկնւել չեն կարող: Ժամանակակից բէժիմը, այսինքն՝ մի բէժիմ, որի ձեռքն է գտնուում ժամանակակից պետութեան իշխանութեան բոլոր զէնքերը, միայն այն դէպքում կարող է ոյժով խորտակւել, եթէ զրկեն նրան գոյութիւնը պահպանելու միջոցներից և այդպիսով զաղարեցնեն նրա հզօր զէնքերի

գործադրութիւնը: Սրա համար պէտք է նրա կրէզիտը—վարկը տասանեցնել, արգելքներ ստեղծել հարկերի ժողովելու դէմ, յոյնեցնել զօրքին և բիւրօկրատիային, նրանց ուժասպառ անել, հալից զցել, նըրանց մէջ գժոհութիւն տուցանել, և վերջապէս, կոտորածութեան կենդրոնական օրգանների շփոթութիւնը և գլուխ կորցնելը հասցնել ամենավերին աստիճանին: Սա մի երկարատև պրօցէս է, և վերջապէս կը յաղթի նա, ով ամենատոկուն և ամենահաստատակամ գօրքս կը գայ: Այժմեան այեկոծութիւնները շարժման միայն երակէտն են ներկայանում: Իսկ այս շարժումը կարող է միայն այն դէպքում յաղթանակել, եթէ այս այեկոծութիւններն իրանցից չեն ներկայացնի նրա զէնիթը, զօգտախնակեալը, — եթէ կարճատև զաղարից յետոյ շարժման արիքը նորից կը բարձրանայ և կըսկսէ հետզհետէ աւելի ևս ուռչիլ՝ մշտապէս սաստկանալով պատերազմի ստեղծած քայքայումով, առևտրական գործերի շրջանառութեան կանգ տանելով, և, որ զլխաւորն է, բոլոր այն թշուառութիւններով, որ քուտեղծել է արիւնտու բէակցիտան: Պատերազմի շարունակութիւնը միայն կը տանէ դէպի յեղափոխական շրջանի շարունակութիւնը, սակայն միւս կողմից էլ խաղաղութիւնն այժմ նշանակում է մի խայտառակ խաղաղութիւն, իսկ այսպիսի խաղաղութիւնն իր հետ կը բերի մանջուրական բանակի գրգռումը, ոքը, անօգուտ կերպով և անանց նողատակի, մի տարիից աւելի կրեց պատերազմի բոլոր ծանրութիւնները՝ նրա համար միայն, որպէսզի անպայման կերպով հայրենիք վերադառնայ: Պատերազմի շարունակութիւնը, ինչպէս և խաղաղու-

435-92 6999



Թեան կնքումը, միատեսակ չափով սպառնում են բէժիմին, և նրան մնացել է միայն ընտրութիւն անել Սցելիայի և Սարիբզայի մէջ:

Գիւղացիների ապստամբութիւնը պէտք է նշանաւոր չափով արագացնէ գոյութիւն ունեցող կազմի անկումը: Ինքն ըստ ինքեան գիւղացիութիւնը չի կարող, ի հարկէ, սպանալ մի որևէ ժամանակակից բէժիմի, բայց գործերի գրութիւնը փոխուած է, եթէ գիւղացիական ապստամբութիւնն ուղղուած է այն կառավարութեան դէմ, որը շատ դժարութեամբ է միայն դիմանում, պահում իրան քաղաքներում: Քաղաքային յեղափոխութիւնն այս դէպքում կանպարտելի է դառնում: Այն միտքը, թէ բարօկրատիան կարող է միանալ գիւղացիական յեղափոխութեան հետ, որպէսզի խորտակէ քաղաքային յեղափոխութիւնը — անմիտ է և անհեթեթ: Այն, ինչ որ պահանջում են գիւղացիները, այսինքն՝ հող, հացահատիկ, անասուններ, նրանք ոչ թէ քաղաքներում կը դառնան, այլ մեծ կալաւածներում միայն իսկ ուզէնի հաստատութիւնը ամենահարուստ կալաւածաւէրն է կայսրութեան մէջ. խոշոր հողատիրութեանը հասցրած ամեն մի հարած սպանում է և սրա ստացւածքներին Արքունի վարչական հիմնարկութեան (պրոֆէսոր Մասսօրիկ «Frankfurter Zeitung»-ի մէջ) պատկանում են 325 ընդարձակ կալաւածներ: Ինքնակալ կառավարութիւնը չի կարող գիւղացիներին ոչինչ տալ, նա միայն նրանցից խլել կարող է՝ զաւակները — գին ուրական ծառայութեան համար, փողերը — պետական գանձարանի համար: Կատարելապէս այդ չի ներկայացնում քաղաքային յեղափոխութիւնը:

Ի հարկէ սօցիալիստների վերաբերութիւնը դէպի գիւղացիները Ռուսաստանում, ինչպէս և ամեն տեղ, վէճեր է առջացնում: Գիւղացիութիւնն իրանից ներկայացնում է աղբարնակութեան բազմաթիւ խումբ, և իրաքանչիւր դէմօկրատական կուսակցութիւն պէտք է նկատի առնէ նրան. սակայն ամեն մի փորձ մշտական տեղ տալու համար սօցիալիստական արդիւնաբերութեան մէջ գիւղական անտեսութեանը, նրա այժմեան կերպարանքում, կը տանէ դէպի գալթակցութիւններ, սխալանքներ և հրէշային անհեթեթութիւններ: Ներկայում, սակայն, գործը սօցիալական յեղափոխութեան չի վերաբերում Ռուսաստանում և ոչ էլ հասարակութեան ստորին դասակարգերից մէկի կողմից քաղաքական իշխանութիւնը դրաւելում՝ արդիւնաբերութեան նոր ձև, նոր եղանակ հաստատելու համար, այլ այնպիսի քաղաքական յեղափոխութեան, որը նպատակ ունի սրբելու, աւելու այն քաղաքական խոշոր դոստները, որոնք խանգարում են արդիւնաբերութեան այժմ իսկ գոյութիւն ունեցող եղանակի տղատ գործադրութիւնը:

Այս յեղափոխութեան մէջ գործարանական սօցիալիստական պրօլետարիատի պատմական դերը կայանում է ոչ թէ նրանում, որ սօցիալիստական հասարակութեան հիմքը դնէ, այլ նրանում, որ աւելի վճռական, «աւելի արմատական» կիրպով պայտ պահէ դէմօկրատիայի շահերը, քան մնացած բոլոր դասակարգերը, — առայժմ դեռ ժամանակակից հասարակութեան ֆունդամենտի վրայ:

Եւ հէնց իսկապէս քաղաքային յեղափոխական պրօլետարիատի այս բաղիկալիզմը

— արմատականութիւնը, այս վճռականութիւնը կարող է թեթեւեցնել և՛ գիւրացնել գիւղական մասսայի գոյութիւնը — եթէ միայն յեղափոխութեանը կաջողի յաղթանակել:

Գիւղացիների և խոշոր կալւածատէրերի մէջ եղած վէճում քաղաքային յեղափոխական շարժումը պէտք է որ չհղօք գիրք բնէ. նրան հարկ չկայ կանգնելու մուծիկի և կալւածատէրի մէջ և վերջինին պաշտպանել առաջինի դէմ. քաղաքային շարժման ամբողջ համակրանքը գիւղացիների կողմն է: Սակայն նրա խնդիրների մէջ չի մտնում նաև գիւղացիներին տնտեսապէս վերականգնեցնելը կալւածատէրերի դէմ, որոնք այժմ Ռուսաստանում այլ դեր են խաղում, քան թէ, օրինակ, աւատական աղնականները Ֆրանսիայի հին ըէժիմի ժամանակ: Այնուամենայնիւ քաղաքի յեղափոխականները, եթէ մինչև իսկ ցանկանան էլ, կարող կը լինեն Հնչին ազդեցութիւն՝ միայն գործել գիւղացիների և կալւածատէրերի յարաբերութեան վրայ: Այս բանը նրանք՝ հէնց իրանք կը վերջացնեն իրար մէջ:

Սակայն, գիւղացին յայտնի յարաբերութիւնների մէջ է գտնուում ոչ միայն դէպի խոշոր կալւածատիրութիւնները, այլ և դէպի պետութիւնը: Եւ այստեղ նրա շահերը բնուում են, հաշուում քաղաքային յեղափոխութեան շահերի հետ և տրամադծօրէն հակասութեան մէջ գտնուում դէպի պետական շահերը:

Քաղաքային յեղափոխութիւնը պահանջում է պատերազմի զաղաբեցումը, մշտական բանակի ջնջումը և նրա փոխարինումը միլիցիայով: Զինւորական պարտականութիւններից հրաժարելը, պէտք է ենթադ-

րել կը լինի ապստամբած գիւղացիութեան առաջին ակտերից մէկը: Ուրիշ ոչ մի ժամանակում մշտական բանակի ոչընչացման պահանջը չի կարող այնքան աւելի ժողովրդական պահանջ լինել, ինչպէս այժմ, երբ ոչ մի տեղից Ռուսաստանին վատնող չէ սպառնում, իսկ զօրքը միայն նրա համար է ծառայում, որպէսզի գնդականարէ սեփական ժողովուրդը և վարէ նոյնքան խայտառակ, որքան և վեսասկար ու ոչինչով չարղարացող պատերազմ՝ երկիրն՝ ընդարձակելու համար:

Բայց քաղաքային յեղափոխութիւնը պահանջում է նաև ժողովրդի համար ճշնող ու ծանր հարկերի վերացումը և նրանց փոխարինումը եկամտային պրօգրէսիւ տուրքով, որի միջոցում փոքր եկամուտները տուրքից կազատեն: Այս պահանջի իրագործելուց ամենից շատ կը շահէ գիւղացիութիւնը, որը չափազանց աւելի է տանջուում ու քայքայուում հարկերի լուծից, քան արևմտեան-եւրօպական գիւղացիութիւնը, սուս գիւղացու համար, նրա սենեցած հնչին եկամուտի պատճառով, այս պահանջի իրականացումը հաւասարազօր է ամեն տեսակ հարկերից ազատելուն:

Ահա երկու պահանջներ, որոնք արդէն բաւական կարող են լինել սուս գիւղացուն կապելու յեղափոխական գործի հետ այնպէս ջերմ կերպով, ինչպէս 1789 թւի յեղափոխութիւնը աւատական ճնշման վերացումով դէպի ինքը գրաւեց Ֆրանսիական գիւղացիութիւնը:

«Ազատամիտ գէմէցները»՝ սակայն չեն կարող այս երկու պահանջների բարձրութեանը համնել: Յեղափոխական պրօլետարիատը միայն տէր է բաւականաչափ վճառ-

կանութեան և անվեհերութեան, որպէսզի այս պահանջները զնի, և սրա համար էլ կարելի է ասել, որ գործարանական պրօլետարիատը միայն կարող է «փրկել» յիպօփօթութիւնը, այսինքն՝ դարձնել զիւրացիներին նրա մարտիկները:

Սակայն քաղաքային յեղափոխութիւնը պէտք է աւելի ևս առաջ գնայ: Այս յեղափոխութիւնը զեռ ևս չի լինելով սօցիալիստական՝ յամենայն դէպս կը լինի պրօլետարական յեղափոխութիւն, — յեղափոխութիւն, որ կը պահանջէ պետութիւնից անել այն բոլորը, ինչքան նրա ուժից է կախած, որպէսզի վերացնէ ժողովրդական ստորին դասակարգերի նիւթական և մտաւոր ու հոգեկան — ինտելլեկտուալ աղքատութիւնը: Իսկ սրա համար կապիտալիստական հասարակութեան մէջ փող է հարկաւոր, շատ փող: Բայց թրտեղից վեր անել այդ, եթէ ժողովրդին ճնշող բոլոր հարկերը վերացւած կը լինեն և փոխադրուած եկամտային պրօզրէսիւ տուրքերով՝ զրւած մեծ եկամտաւորի վրայ: Այսպիսի բարդութիւնների միջոցով ազատամիրա զեմէցների բէժիմը պէտք է որ խօրտակուի: Իսկ պրօլետարական յեղափոխութիւնը, ընդհակառակը, կանգ չի աննի այնպիսի միջոցների առաջ, որոնք ազատամիրաներին սարսափի մէջ են դրում, նա կարող է զրաւել եկեղեցական, վանական և ուղէնի կարածները և ստեղծել այսպիսով մի հարուստ Փօնդ նրա համար, որպէսզի միանգամից բարձրացնէ Ռուսաստանի, ինչպէս գիւղացիութեան, նոյնպէս և պրօլետարիատի կուլտուրական մակերևոյթը: Միմիայն արքունի հաստատութեան հողերը կազմում են ութը միլիոն (8,000,000) հէկտար. եկեղեցիները և վան-

քերը մօտաւորապէս այդքան քանակութեան հողի տէր են, իսկ այս բոլոր հողերը միասին առած հաւասարուում են Պրուսիայի մշակութեան համար պիտանի ամբողջ մակերևոյթին \*): Եւրոպական ստացւածքը, համեմատաբար, նոյնպէս մեծ է: Ինչքան շատ բան կարելի էր անել այս անգին միջոցներով, — արքան ուսումնարաններ, որքան հիւանդանոցներ կարելի էր շինել սրանցից ստացւած միջոցներով, որքան անասուններ, երկրագործական գործիքներ կարելի էր գնել գիւղացիների համար և այլն: Սակայն չալթական յեղափոխութիւնը կարող կը լինի, առանձին մեծ ջանքեր չը գործադրելով, օգուտ քաղել նոյնպէս և յիպօփօթութեան ամենաշար հակառակորդների սնազին կալածներէց՝ պրօլետարիատի և գիւղացիութեան զրութիւնը բարելուելու համար:

Պարզ բան է, որ յեղափոխութիւնը կարող է աւելի շատ բան առաջարկել գիւղացուն, քան ինքնակալ կառավարութիւնը: Եւ եթէ անցի կունենայ գիւղացիութեան


\*) Բանուրների զրութեան մասին եղած անդլիսկան բանկէտում (Լօնդօն, 1894) Դրազի, Ռուսաստանի մասին հաղորդածի համաձայն, արքունի հաստատութեան հողերը կազմում են 7367740 դեհետար = 8100,000 հէկտար. եկեղեցական, վանական և քաղաքային հողերը — 8,572,622 դեհետար = 9500,000 հէկտար: Քաղաքային անշարժ ստացւածքներն աննշան են: Այս թիւերը վերաբերում են միայն եւրոպական Ռուսաստանին, բայց Լեհաստանից, Ֆինլանդիայից և Իօնի Զօրքերի շրջանից:

ապտամբութիւնը, որի վրայ մասնացոյց  
են անում բազմաթիւ սիմպոսիւնները, յեղա-  
փոխութիւնը երբէք չի պէտք է վախենայ  
ներանից. պէտք է վախենան այժմեան կառու-  
վարութեան անդամները, որոնք կարող են  
ոչ միայն իշխանութիւնից զրկուել, այլև — որ  
ներանց համար աւելի ևս զգալի կը լինի —  
նաև իրանց հարստութիւններից:

Քաղաքացին յեղափոխական պրօլետա-  
րիաար ողջունում է լանձին գիւղացիու-  
թեան իր ամենալաւ գաշնակցին: Եթէ «տի-  
րապետոզ խմբակը» յերաւի այնքան ան-  
միտ կը լինի, որ ինքը կըսկսէ գիւղացիու-  
թիւնը զէպի ապտամբութիւն զրգել, այն  
ժամանակ նա բոլորովին այլ գիւտեր կանէ,  
քան թէ այն, որոնց նա հաստա Փապօնա-  
կան և Զուբաաուական բանուորական կազ-  
մակերպութիւնների միջոցով:

Եւ այսպէս, շարունակեցէք, պարոններ:

Փետրար, 1905 թ.



1286

ՀՈՅՍ ԵՆ ՏԵՄԵԼ ԵՒ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ  
«Կայծ»-ի նեհեկալ հրատարակութիւնները՝

- |                                                              |    |       |
|--------------------------------------------------------------|----|-------|
| 1) Հայրենասիրութիւն Կ. Կառլցկու գինը                         | 3  | կուպ. |
| 2) Պետական Գուման » » »                                      | 3  | »     |
| 3) Կորչին Սօցիալ-Գէմօկը. Վ. Բրակէի »                         | 10 | »     |
| 4) Ազգային հարցը և սօցիալ-գէմօկըտախան<br>Սա. Շահումեանի գինը | 10 | »     |
| 5) Գիւղացիները և յեղափոխութիւնը<br>Ռուսաստանում Կ. Կառլցկի » | 5  | »     |

Գինը՝ 5 կուպ.